# ՕԾՎԵՑ ՎԱՐԴԵՆԻԿ ԳՅՈՒՂԻ Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 8-ին տեղի ունեցավ Գեղարքունյաց թեմի Վարդենիկ գյուղի Ս. Հրեշտակապետաց նորակառույց եկեղեցու օծումը: Օծման արարողությունը կատարեց Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանը՝ Գեղարքունիքի թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Դերենիկ վրդ. Դավթյանի և Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ Տ. Գարեգին աբղ. Հարությունյանի մասնակցությամբ:

Գյուղի 14-րդ դարի Ս. Աստվածածին եկեղեցին ավերվել էր խորհրդային տարիներին, և արդեն մի քանի տասնամյակ 11 հազար բնակչություն ունեցող Վարդենիկը չուներ իր աղոթատունը: Երկու տարի առաջ վարդենիկցի բարերար Միքայել Միքայելյանի հովանավորությամբ և համագյուղացիների ջանքերով սկսվեցին նոր եկեղեցու կառուցման աշխատանքները: Այսօր արդեն հին եկեղեցու տեղում վեր է հառնել նորակառույց եկեղեցին: Ճարտարապետ Սամվել Դերձյանի մտահղացմամբ նոր եկեղեցին կառուցվել է խոնարհված եկեղեցու վրա՝ Ս. Հրեշտակապետաց եկեղեցու ներքնահարկում պահպանելով հնամենի եկեղեցու Սուրբ Խորանը:

Օծման արարողությունից հետո եկեղեցու բակում տեղի ունեցավ ժողովրդական տոնախմբություն: Շնորհավորելով վարդենիկցիներին նոր եկեղեցու կառուցման առթիվ՝ Առաքել Սրբազանն ընթերցեց նաև Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը, որով, ի գնահատություն եկեղեցաշեն գործունեության, Միքայել Միքայելյանը պարգևատրվեց Հայոց Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով (տե՛ս էջ 34):



ՎԱՐԴԵՆԻԿԻ Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ՆՈՐԱՕԾ ԵԿԵՂԵՑԻՆ



ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԴԵՐԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆԸ,
ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՐԱՐ ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ ԵՎ ԱՌԱՔԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԱՐԱՄՅԱՆԸ
ՀԱՎԱՔՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ ԿԻՍՈՒՄ ԵՆ ՕԾՄԱՆ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ